ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի մարտի 9-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ»**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի մարտի 7-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի մարտի 9-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Թիվ 3 չափաբաժնի տեխնիկական բնութագրում «Տեսամուտքերի քանակը՝ 32 LAN»: Արդյոք ընդունելի է այդ պայմանի ապահովումը բաժանարարների (Switch) միջոցով:

Պարզաբանում N 1: Այո, ընդունելի է: Այս դեպքում 32 LAN բնութագիրը նշանակում է 32 թվային տեսախցիկների միացման հնարավորություն բաժանարարների (Switch) միջոցով:

Հարցադրում N 2: Թիվ 3 չափաբաժնի տեխնիկական բնութագրում «Սենսոր՝ min 1/2.8 CMOS-2Mp», իսկ քիչ ներքև՝ «Թույլատրելի կետայնությունը՝ HD»: Եթե սենսորի համար պահանջվում է 2Mp, ապա թույլատրելի կետայնությունը կլինի Full HD կամ 1080p, իսկ եթե թույլատրելի կետայնությունը պահանջվում է HD, ապա սենսորը կարող է լինել 1Mp: Խնդրում ենք ճշտել, թե այս պայմաններից որն է առաջնային՝ «Սենսոր՝ min 1/2.8 CMOS-2Mp», թե «Թույլատրելի կետայնությունը՝ HD»:

Պարզաբանում N 2: Առաջնային է «Սենսոր՝ min 1/2.8 CMOS-2Mp» բնութագիրը: Նշված «Թույլատրելի կետայնությունը՝ HD» բնութագիրը բերված է որպես ընդունված տեխնիկական ցուցանիշ:

Հարցադրում N 3: Թիվ 6 և 7 չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է «Օբյեկտիվ՝ f=2.8-6մմ»: Խնդրում ենք ճշտել, արդյոք սա նշանակում է, որ պահանջվում են փոփոխական ֆոկուսային հեռավորությամբ օբյեկտիվներով տեսախցիկներ: Եթե ոչ՝ ապա խնդրում ենք հստակ՝ առանց գծիկի, նշել պահանջվող ֆոկուսային հեռավորությունը: Եթե ընդունելի են մի քանիսը, ապա դրանք պետք է առանձնացվեն «կամ» բառով:

Պարզաբանում N 3: Նշված բնութագիրը չի պահանջում փոփոխական ֆոկուսային հեռավորությամբ օբյեկտիվներով տեսախցիկներ: Ընդունելի են 2,8մմ մինչև 6մմ օբյեկտիվ ունեցող ապրանքատեսակները:

Հարցադրում N 4: Թիվ 8 չափաբաժնի տեխնիկական բնութագրում «Լուսազգայունություն՝ 0,05/0,005լյուքս»: Խնդրում ենք ճշտել, թե ինչ է նշանակում «0,05/0,005լյուքս» պայմանը:

Պարզաբանում N 4: Նշված բնութագրիչն ընդունված տեխնիկական ցուցանիշ է արտաքին օգտագործման տեսախցիկների համար, որն արտահայտում է դիտվող տիրույթի հնարավոր լուսավորվածության աստիճանի ընկալումը «ցերեկ/գիշեր» ռեժիմներում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տատյանա Միրզոյանին։

Հեռախոս՝ 060 651 471

Էլ. փոստ՝ procurement.ysmu2@gmail.com

«ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Նախագահ՝	_____	Ա.Արշակյան
Անդամներ՝	_____	Գ.Վարդանյան
	_____	Ռ.Գալստյան
	_____	Վ.Մարգարյան
	_____	Ա.Ահարոնյան